


# ՌԱՀՀԿ ԱՄՍԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

# 3

Մ ա ր տ 2 0 1 0



Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն

**ՌԱՀՀԿ լրատուի երրորդ համարը ձեր սեղանին է**  
Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնը (ՌԱՀՀԿ) հունվարին մեկնարկ տվեց նոր ամսական լրատուների շարքի: Այժմ ձեր սեղանին է ՌԱՀՀԿ լրատուի հերթական համարը, որը համառոտակի ներկայացնում է 2010թ. մարտին մեր իրականացրած գործունեությունը և ծրագրերը:

Ժողովրդավարության պակասը, օրենքի թույլ կամ գոյություն չունեցող գերակայությունը և անհավասար տնտեսական զարգացումն այն գործոններն են, որոնք անհրաժեշտ են դարձնում Հայաստանի և Սփյուռքի միջև նորովի նվիրվածությունը և ներգրավվածությունը:

## ՌԱՀՀԿ-ի գործունեությունը և ծրագրերը

**ՌԱՀՀԿ հիմնադիրը ելույթ ունեցավ Հայաստան-Սփյուռք հարաբերություններին նվիրված՝ Հայաստանի քաղաքականության ֆորումի երկրորդ տարեկան համաժողովում**



Իր գլխավոր զեկույցը ՌԱՀՀԿ հիմնադիր Բաֆֆի Կ. Հովհաննիսյանը ներկայացրեց 2010թ. փետրվարի 28-ից մինչև

մարտի 2-ը Վաշինգտոնում անցկացված և Հայաստան-Սփյուռք հարաբերություններին նվիրված՝ Հայաստանի քաղաքականության ֆորումի երկրորդ տարեկան համաժողովում:

«Հայաստան-Սփյուռք հարաբերություններ. անկախությունից 20 տարի անց» թեմայով ֆորումում Հովհաննիսյանը մասնավորապես ողջունեց Հայաստան-Սփյուռք հարաբերությունների նկատմամբ «քննադատական մոտեցման և քաղաքական խոր վերլուծությունների հակված» նոր սերնդին՝ միեւնույն ժամանակ ընդգծելով «ապագայի միասնական կամ համակարգված տեսլականի կամ ծրագրի» մշակման անհրաժեշտությունը:

Որպես ՀՀ արտաքին գործերի առաջին նախարար՝ Հովհաննիսյանը նաեւ հիշեցրեց, որ այսօր Հայաստանի առջեւ ծառայած մարտահրավերները՝



## ՌԱՀՀԿ տնօրենը Լոնդոնում զեկույց ներկայացրեց Մեծ Բրիտանիայի՝ արտաքին գործերով զբաղվող գրասենյակին...



Միացյալ թագավորության Արտաքին գործերի և համագործակցության գրասենյակի հրավերով ՌԱՀՀԿ տնօրեն Ռիչարդ Կիրակոսյանը մարտի 2-ին այցելեց Լոնդոն և զեկույց ներկայացրեց Հարավային Կովկասի տարածաշրջանային զարգացումների վերաբերյալ: Վերոնշյալ գրասենյակի գլխավոր դահլիճներից մեկում տեղի ունեցած միջոցառմանը ներկա էին Մեծ Բրիտանիայի՝ արտաքին գործերով զբաղվող գրասենյակից և Միացյալ թագավորության Պաշտպանության →

← նախարարությունից ավելի քան երկու տասնյակ պաշտոնյաներ, ինչպես նաև Կովկասում գործունեություն ծավալող մի շարք հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

**...Եվ ելույթ ունեցավ «Չեթըմ հաուզի»՝ հայ-թուրքական դիվանագիտությանը նվիրված սեմինարում**



Մարտի 3-ին Ռիչարդ Կիրակոսյանը նաև մասնակցեց հայ-թուրքական դիվանագիտությանը նվիրված սեմինարին, որը կազմակերպել էր «Չեթըմ հաուզը»՝ Լոնդոնի Միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտի կենտրոնը: Այն հայտնի է որպես «միջազգային հարցերի քննարկման եւ վերլուծության» առաջատար ինստիտուտ:


**ՌԱՀՀԿ-ը մասնակցեց ՆԱՏՕ-ի Խորհրդարանական վեհաժողովի սեմինարին**



ՀՀ Ազգային ժողովի հրավերով ՌԱՀՀԿ-ը մասնակցեց ՆԱՏՕ-ի Խորհրդարանական վեհաժողովի 73-րդ Rose-Roth սեմինարին, որը մարտի 11-13-ն անցկացվեց Երեւանում: ՌԱՀՀԿ-ի ներկայացուցիչների, ինչպես նաև ՆԱՏՕ-ի անդամ եւ գործընկեր 16 երկրներից 41 պատգամավորների մասնակցած եռօրյա այս սեմինարի թեման էր՝ «Տարածաշրջանային զարգացումները Հարավային Կովկասում. մարտահրավերներ, հնարավորություններ եւ հեռանկարներ»: ՌԱՀՀԿ-ը ՆԱՏՕ-ի միջոցառմանը մասնակցած հետազոտական ինստիտուտների եւ հասարակական ու միջազգային կազմակերպությունների 72 պաշտոնական ներկայացուցիչների շարքում էր:



**ՌԱՀՀԿ-ը մասնակցեց կրթական ծրագրին նվիրված սեմինարին**



Երեւանի՝ Եվրախորհրդի կողմից ֆինանսավորվող քաղաքագիտության դպրոցի հետ համատեղ ՌԱՀՀԿ-ը մարտի 22-26-ը Թբիլիսիում մասնակցեց աշխատանքային սեմինարին, որը կազմակերպել էր «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամը:



**ՌԱՀՀԿ-ն անցկացրեց առանց հղումների քննարկում՝ նվիրված տարածաշրջանային զարգացումներին**



Մարտի 30-ին ՌԱՀՀԿ տնօրենը Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական անձնակազմի եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացրեց առանց հղումների քննարկում՝ նվիրված Հայաստանում եւ տարածաշրջանում ներկայում ընթացող զարգացումներին: Ամսական քննարկումների շարքից այս երկրորդով ՌԱՀՀԿ-ը Հայաստանում գործունեություն ծավալող միջազգային կազմակերպություններին եւ դիվանագիտական առաքելություններին →

← տրամադրեց Հայաստանի քաղաքական, տնտեսական եւ անվտանգության հարցերի վերլուծությունների ու տեղեկատվության անկախ աղբյուր, ինչպեսեւ հավելյալ վերլուծություններ տարածաշրջանային հիմնախնդիրների եւ միտումների վերաբերյալ:

Ոչ պաշտոնական քննարկման մասնակիցների շարքում էին ՀՀ-ում Վրաստանի դեսպան Գրեգորի Տաբատաձեն, Հնդկաստանի դեսպան Աշալ Կումար Մալհոտրան, ԵԱՀԿ երեսնյան գրասենյակի ղեկավար Սերգեյ Կապինոսը, ՄԱԿ-ի երեսնյան գրասենյակի համակարգող Դաֆինա Գերչեան, Ռումինիայի եւ ԱՄՆ-ի դեսպանատների, Հայաստանում Եվրամիության պատվիրակության եւ Հայաստանում Եվրամիության խորհրդակցական խմբի ներկայացուցիչները:

**ՌԱՀՀԿ-ի առաջիկա հրատարակությունները**

**Հայաստանում ունեցվածքի եւ եկամտի միջեւ անջրպետի գնահատականը...**



Ի սատարումն ՀՀ-ում սոցիալ-տնտեսական անհավասարության խնդրի վերաբերյալ Համաշխարհային բանկի նոր վերլուծության՝ ՌԱՀՀԿ-ը պատրաստում է ունեցվածքի եւ եկամ-

տի միջեւ հետզհետեւ մեծացող անջրպետին նվիրված նորարար մի վերլուծություն, որի կիզակետում կլինեն կոռուպցիայի եւ անարդյունավետ ու կամայական հարկահավաքի հարցերը:

Ձեկույցի «Դուլարներ եւ իմաստ» խորագիրն ի մասնավորի կարծարծի տնտեսությունում եւ ընտանեկան բյուջեում դրամական փոխանցումների դերակատարության խնդիրը:

**...Եվ Հայաստանի «տխրահոջակ հարուստների» ապրելակերպը**

Այս զեկույցը նաեւ կներառի Հայաստանի «տխրահոջակ հարուստների» ապրելակերպին նվիրված մի գլուխ, որը կուսումնասիրի օլիգարխիկ գործարարության ու ձեռներեցության բնույթը, ինչպեսեւ երկրի տնտեսական գործունեությանը «ապրանքային մենաշնորհների» եւ համապատասխան այլ մենաշնորհների հասցրած վնասները:

**«Հայաստանյան քաղաքականության տարեգիրք. 2010»**



Կենտրոնի անձնակազմը ներգրավված է նոր հետազոտությունների նախապատրաստական փուլում: Ընթացիկ տարվա ամփոփիչ գիրքը կրում է «Հայաստանյան քաղաքականության տարեգիրք. 2010» նախնական խորագիրը: Այն նմանապես կծառայի իբրեւ կարեւոր հիմնադրյուր եւ ընթերցողների դատին կհանձնի ՀՀ քաղաքականության բոլոր դիտանկյուններն արծարծող հարուստ տեղեկանյութ եւ վերլուծություններ:

**«Անվտանգության եւ ռազմական հետազոտություններ»**



ՌԱՀՀԿ-ը պատրաստում է անվտանգության եւ ռազմական հետազոտությունների թեմայով զեկույցների՝ ուսումնասիրությունների ու հոդվածների նոր շարք՝ կիզակետում ունենալով Հայաստանի ազգային անվտանգության եւ ռազմական բարեփոխումների խնդրին վերաբերող կարեւոր հարցեր:

Ձեկույցների այս ուրույն եւ գործընկերների կողմից վերանայված շարքը, որում կընդգրկվեն միջազգային եւ հայ փորձագետների վերլուծությունները, կիրատարակվի երեք լեզվով՝ հայերեն, անգլերեն եւ ռուսերեն: Այն հավակնում է բեմահարթակ դառնալ ինչպես տարածաշրջանային ու միջազգային անվտանգության հարցերին, ռազմական ստրատեգիային, ռազմարվեստին եւ ռազմագիտությանը, այնպես էլ ՀՀ ազգային անվտանգությանը եւ պաշտպանական քաղաքականությանը վերաբերող այլ նշանակալից թեմաների քննարկման համար:

● ՉԼՄ-ների հետ հարաբերությունները



«Ազատություն» ռադիոկայանը հրապարակեց Ադրբեջանի զինված ուժերին Կենտրոնի տված բննադատական գնահատականը



CAUCASUSREPORT

Ադրբեջանի զինված ուժերի վիճակի վերաբերյալ «Ազատություն» ռադիոկայանի 2010թ. մարտի 15-ին հրապարակած զեկույցը, որի համահեղինակներն են ռադիոկայանի կովկասյան մասնագետ Լիզ Ֆուլերը ու ՌԱՀՀԿ տնօրեն Ռիչարդ Կիրակոսյանը, լուսաբանում է Ադրբեջանի պաշտպանական բնագավառի այն պայմաններն ու խնդիրները, որոնք աղերսվում են բարձրաստիճան ադրբեջանցի պաշտոնյաների կողմից վերջին ժամանակներս վերստին հնչեցվող պատերազմական սպառնալիքներին: Այս հոդվածի անգլերեն բնօրինակը եւ հայերեն տարբերակը կարող եք կարդալ՝ այցելելով ՌԱՀՀԿ-ի կայքէջը՝ [www.acnis.am/main](http://www.acnis.am/main) :


«Նովոստի Արմենիա» լրատվական գործակալությունը հարցազրույց անցկացրեց ՌԱՀՀԿ անձնակազմի հետ



Մարտի 10-ին «Նովոստի Արմենիա» միջազգային լրատվության գործակալությունը հրապարակեց երկու հարցազրույց ՌԱՀՀԿ անձնակազմի հետ: Առաջինը Կենտրոնի ավագ փորձագետ Մանվել Մարգսյանի հետ էր, իսկ երկրորդը՝ տնօրեն Ռիչարդ Կիրակոսյանի:

Ռուսերեն հրապարակված այս հարցազրույցները կարող եք կարդալ՝ այցելելով ՌԱՀՀԿ կայքէջ՝ [www.acnis.am/main](http://www.acnis.am/main) :

Հավելյալ տեղեկություն մեր մասին



Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնը 1994թ. հիմնադրել է ՀՀ առաջին արտգործնախարար Բաֆֆի Կ. Հովհաննիսյանը՝ արժանալով հայաստանյան եւ Սփյուռքի աջակիցների լայն շրջանակների գորակցությանը:

Հետևելով համաշխարհային զարգացումներին, գիտելիքների հիմքեր խարսխելով, հանրության հետ երկխոսություն ծավալելով՝ Կենտրոնը հետխորհրդային տիրույթում հանդես է գալիս որպես երկրաքաղաքական ստեղծագործական մտածողություն ձեւավորող եւ միջազգային միջավայրի համապարփակ ընկալմանը նպաստող ուժ: Վերջին շրջանում Կենտրոնն առաջնահերթ տեղ է հատկացնում տարածաշրջանային անվտանգության ու համագործակցության, քաղաքացիական կրթության, պետության եւ ազգի համար վճռորոշ՝ ներքին ու արտաքին քաղաքականությունների կիրառական հետազոտությանը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՌԱՀՀԿ՝ Երեւան, Երզնկյան 75, հեռախոս՝ (37410) 528-780 կամ 274-818, հեռապատճեն՝ (37410) 52-48-46, էլ. փոստ՝ [root@acnis.am](mailto:root@acnis.am) եւ [info@acnis.am](mailto:info@acnis.am), կայքէջ՝ [www.acnis.am](http://www.acnis.am):